



Կ Ա Ն Ա Ն Ց ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ

«Համալսարանական կրթությանը կանայք»
լրատուի հավելված

ՄԱՅԻՍ, 2011, №6

ՄԱԿ-ի ԿԱՆԱՆՑ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 55-րդ ՆՍՏԱԾՐՉԱՆԸ

2011 թ. փետրվարի 22-ից մինչև մարտի 4-ը Նյու Յորքում տեղի ունեցած 55-րդ նստաշրջանը հորել-յանական չէր, այլ հերթական, այդուհանդերձ նրա աշխատանքը բավականին բազմաբնույթ և ինտենսիվ էր: Բուռն բանավեճեր ու քննարկումներ ծավալվեցին ինչպես հիմնական թեմայի՝ «Կանանց և աղջիկների համար կրթության, մասնագիտական պատրաստության, գիտության և տեխնիկայի մատչելիությունը, ներառյալ՝ աջակցությունը կանանց համար լրիվ զբաղվածության և արժանավայել աշխատանքի հավասար մատչելիությունը», այնպես էլ լայն սպեկտրի այլ հիմնախնդիրների շուրջ:

ՄԱԿ-ի Կանանց կարգավիճակի հանձնաժողովի 55-րդ նստաշրջանը դարձավ մի համաժողով, որտեղ ՄԱԿ-ի կառույցները, միջազգային մյուս կազմակերպությունները, ՄԱԿ-ի անդամ երկրների կառավարությունների, մասնավոր սեկտորի և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները կարող էին ներկայացնել իրենց փորձը և մտքեր փոխանակել, փորձել հասնել համաձայնության Պեկինի գործողությունների ծրագրի ու Հազարամյակի նպատակների կատարմանը, նոր ծագած հիմնախնդիրների լուծման ռազմավարությունների մշակմանն ուղղված առաջնահերթ միջոցառումների և ամենակարևորը՝ կյանքի ու քաղաքական գործելակերպի թելադրած նոր մարտահրավերներին արդյունավետ և համարժեք պատասխանների որոնման առնչությամբ:

Նստաշրջանն անցավ հիմնական թեմային նվիրված երկու գուգահեռ կլոր սեղանների շուրջ ծավալված ընդհանուր բանավեճի և վեց «պանելային» բանավեճերի ձևաչափով: Նստաշրջանի քննարկմանը ներկայացվել էին հետևյալ թեմաները.

- *Առանցքային նախաշեռնությունները քաղաքականության ոլորտում և գեղեցիկության թաղադրիչի ինտեգրման ներուժի զարգացումը՝ շեշտադրելով գիտությունը և տեխնիկան:*
- *Առանցքային նախաշեռնությունները քաղաքականության ոլորտում և գեղեցիկության թաղադրիչի ինտեգրման ներուժի զարգացումը՝ շեշտադրելով կրթությունը և մասնագիտական պատրաստությունը:*
- *Աղջիկների նկատմամբ խտրականության և բռնության բոլոր ձևերի վերացմանն ուղղությամբ համաշխարհային տարածված եզրակացությունների իրականացման գոր-*

ծում առաջընթացի գնահատումը (2007 թ. հանձնաժողովի 51-րդ նստաշրջանում այդ եզրակացություններն ընդունելուց հետո շեռնարկված միջոցների և ջանքերի արդյունքների տեսությամբ):

- *Գեղեցիկության հավասարությունը և կայուն զարգացումը:*
- *Կանխվող մայրական մահացության և հիվանդացության վերացումը և կանանց իրավունքների ու հնարավորությունների ընդլայնումը:*
- *Գյուղի կանանց իրավունքների ու հնարավորությունների ընդլայնումը և նրանց դերը աղքատության ու սովի իսպառ վերացման գործում, զարգացումը և նոր մարտահրավերները (հանձնաժողովի հաջորդ՝ 2012 թ. կայանալիք 56-րդ նստաշրջանի գերակա թեման):*
Մի շարք երկրների, մասնավորապես՝ Եվրոպական Միության երկրների ներկայացուցիչների գրագետ ելույթների և որոշ հասարակական կազմակերպությունների հայտարարությունների շնորհիվ շատ դրույթներ ու կարևոր գաղափարներ արտացոլվեցին փորձագետների և միստերի նախագահների ելույթներում, ինչպես նաև ամրագրվեցին նստաշրջանի ամփոփիչ փաստաթղթերում:
Նստաշրջանում ընդունվեց 3 բանաձև.
- *«Գեղեցիկության հավասարության ինտեգրումը և կանանց իրավունքների ու հնարավորությունների ընդլայնմանն առաջնորդող կլիմայի փոփոխության ոլորտի քաղաքականության և ռազմավարությունների մեջ»,*
- *«Պաղեստինյան կանանց միմակը և օգնությունը նրանց»,*
- *«Կանայք, աղջիկները և ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ը»:*
Նաև համաձայնեցված եզրակացություններ արվեցին մի շարք հիմնախնդիրների առնչությամբ:



55-րդ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ԱՐԴՅՈՒՆՔԸ ԵՂԱՎ ԱՅՆ ԴՐՈՒՅԹԻ ԱՄՐԱԳՐՈՒՄԸ, ՈՐ «ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻՑ ՄԵԿՆ Է»



Ես մասնակցեցի ՄԱԿ-ի կանանց կարգավիճակի հանձնաժողովի 55-րդ նստաշրջանի գրեթե բոլոր նիստերին, ինչը հնարավորություն տվեց ստանալու լիարժեք տեղեկություններ նստաշրջանի ընթացքի և քննարկվող հիմնախնդիրների մասին, վերլուծելու և կազմելու սեփական կարծիքը նստաշրջանի աշխատանքի վերաբերյալ:

Նստաշրջանում կրթության հիմնախնդրի քննարկումների գլխավոր արդյունքը եղավ հետևյալ դրույթի ամրագրումը. **«Կրթությունը մարդու իրավունքներից մեկն է:** Կրթության, մասնագիտական պատրաստության և գիտության ու տեխնիկայի հավասար մատչելիությունն ընդլայնում է կանանց հնարավորությունները գլոբալ փոփոխությունների համատեքստում և նպաստում մարդու բոլոր իրավունքների իրականացմանը, ինչպես նաև զենդերային հավասարության նվաճմանը և կանանց նկատմամբ խտրականության ու բռնության բոլոր ձևերի վերացմանը»:

Դրա հետ մեկտեղ, ցավոք,

հարկ է նշել, որ շատ կառավարությունների ներկայացուցիչների ելույթները հիմնականում «կատարված դրական աշխատանքի մասին հաշվետվության» բնույթ ունեին, բացակայում էր իրավիճակի վերլուծությունը, չէին ներկայացվում կանանց այս կամ այն կենսական հարցի, այդ թվում կրթության ոլորտում առկա խնդիրների լուծման ընթացքում ծագած հիմնահարցերը, շրջանցվում էր զենդերային թեմատիկայի և զենդերային հավասարության հաստատման հիմնախնդիրների ընդհանուր համատեքստը: Ելույթներում անդրադարձ չէր արվում առանցքային սոցիալական և մշակութային գործոններին, որոնք խոչընդոտում են զենդերային հավասարության ձեռքբերումը, այդ թվում նաև որակյալ բարձրագույն կրթություն ստանալու հարցում:

Թեև նստաշրջանում ծավալվեցին բուռն բանավեճեր, չհաջողվեց լիովին հասնել հանձնաժողովի հայտարարված նպատակին: Դրա պատճառը ոչ միայն տարբեր տարածաշրջանների, երկրների և մշակույթների միջև գաղափարախոսական ու հայեցակարգային տարածայնություններն էին, այլև պաշտոնական նիստերի աշխատանքին մասնակցելու սահմանափակումները հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների համար, որոնք, ներկայացնելով քաղաքացիների շահերը և քաջատեղյակ լինելով նրանց խնդիրներին, կարող էին իրենց ելույթներով լրացնել չլուծված հիմնախնդիրների ցանկը:

Չնայած մի շարք հասարակական կազմակերպություններ

րի ներկայացուցիչներ իրենց հայտարարություններում և կարճ ելույթներում փորձում էին պատվիրակությունների ուշադրությունը հրավիրել այն հիմնախնդիրների և գործոնների (հատկապես՝ տնտեսական և մշակութային, այդ թվում կարծրատիպերի, զենդերային դերերի մասին ավանդական պատկերացումների, հասարակության մեջ և ընտանիքում կանանց նկատմամբ խտրականության, բռնության և այլն) բացահայտման անհրաժեշտության վրա, որոնք խոչընդոտում են զենդերային հավասարության հաստատումը և հասարակության մեջ հանդուրժողական հարաբերությունների ձևավորումը, ինչպես նաև՝ հատուկ ժամանակավոր միջոցների ավելի լայն կիրառման անհրաժեշտության վրա, այդուհանդերձ, նստաշրջանում չհաջողվեց հաղթահարել երկրների պաշտոնական ներկայացուցիչների ելույթների չափազանց կանոնակարգված և սխեմատիկ բնույթը և հասնել ելույթների տեսանկյունների փոփոխման՝ լուրջ վերլուծության և հեռանկարներին ուղղված որոշակի առաջարկությունների առումով:

Հարկ է նշել հանձնաժողովի հրապարակավ արտահայտած մտահոգությունը ոչ միայն կրթության, գիտության և տեխնիկայի ոլորտներում կանանց վիճակի բարելավման ճանապարհին առկա լուրջ խոչընդոտների, այլև հիմնախնդիրների լայն սպեկտրի կապակցությամբ:

Հանձնաժողովն արձանագրեց այն փաստը, որ շատ տղամարդիկ և կանայք դեռևս մնում



ՄԱԿ-ի Կանանց կարգավիճակի հանձնաժողովի 55-րդ նստաշրջանը

են զենդերային կարծրատիպերի գերին, ինչպես նաև՝ այն դժվարությունները, որոնք կապված են խտրական պատկերացումներից և գործելակերպից հրաժարվելու հետ:

Հանձնաժողովը լուրջ մտահոգություն հայտնեց իրավական, տնտեսական, սոցիալական ու մշակութային արգելքների առիթով, որոնք խոչընդոտում են կանանց և աղջիկների համար կրթության և մասնագիտական պատրաստության հավասար մատչելիությունը, և արձանագրեց կանանց նկատմամբ խտրականության բազմաթիվ ձևերի առկայությունը:

Առանձնապես պետք է նշել հանձնաժողովի կողմից Պեկինի գործողությունների ծրագիրը կատարելու խնդրում քաղաքացիական հասարակության դերի, ինչպես նաև ազգային մեխանիզմների կարևոր դերի արձանագրումը, որոնց հարկ է ուշադրություն հատկացնել ամենաբարձր կառավարական մակարդակում:

55-րդ նստաշրջանում մասնակից հասարակական կազմակերպությունների թվի կրճատումը և նստաշրջանում հիմնախնդիրների քննարկմանը դրանց ներկայացուցիչների մասնակցության նվազումը վկայում են ՄԱԿ-ի կառույցների կողմից այն դերի թերագնահատման մասին, որ ՀԿ-ները կարող են ունենալ զենդերային հավասարության առաջնդման և ընդհանուր առմամբ Պեկինի գործողությունների ծրագրի ու հետպեկինյան փաստաթղթերի իրականացման, Հազարամյակի զարգացման նպատակների նվաճման գործում:

55-րդ նստաշրջանի բացմանը հանդիսավորությամբ նշվեց 2010 թ. հոկտեմբերին «ՄԱԿ-

կանայք» կառույցի ստեղծումը և Միշել Բաշելետի նշանակումը դրա ղեկավար: Իսկ նստաշրջանի ավարտին անցկացվեց «ՄԱԿ-կանայք» կառույցի և Միշել Բաշելետի ներկայացման հանդիսավոր արարողություն: Կազմակերպվեց նաև մեծ համերգ: Ինչպես նշեց ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղար Բան Կի-Մունը, նոր կառույցի գործունեության համար հատկացվել են զգալի գումարներ, շատ երկրներում կբացվեն ներկայացուցչություններ, և, բնականաբար, կհատկացվեն որոշակի միջոցներ զենդերային

- Հանձնաժողովը քննարկեց ինչպես կրթության իրավունքը (մատչելիության և մասնակցության հարցերը), այնպես էլ իրավունքները կրթության ոլորտի ներսում (ընտրության ազատություն), անդրադարձավ կրթության միջոցով իրավունքների հարցերին, այսինքն՝ զբաղվածության ոլորտում հնարավորությունների հավասարությանը: **Սա որոշ առումով նոր մոտեցում է:**

- ՄԱԿ-ի կանանց կարգավիճակի հանձնաժողովի 55-րդ նստաշրջանը բոլոր շա-



հավասարության հասնելու և կանանց շրջանում աշխատանքներն ուժեղացնելու համար: Ցավոք, Հայաստանն ընդգրկված չէ այն երկրների ցանկում, որտեղ բացվելու է «ՄԱԿ-կանայք» ներկայացուցչություն:

ՄԱԿ-ի կանանց կարգավիճակի հանձնաժողովի 55-րդ նստաշրջանի աշխատանքի արդյունքների հիման վրա կարելի է հանգել հետևյալ եզրակացությունների, որոնք առավել կարևոր են Հայաստանի համար.

հագրգիռ մասնակիցներին ոչ միայն մտորելու նյութով, այլև զենդերային հավասարության հաստատմանը և կանանց իրավունքների ու հնարավորությունների ընդլայնմանն ուղղված հետազա աշխատանքի ազդակ դարձավ:

- **Հանձնաժողովը մեկ անգամ ևս ընդգծեց կանանց վիճակի բարելավման ազգային մեխանիզմների ուժեղացման կարևորությունը:**

- **Հանձնաժողովը կոչ արեց**



բոլոր երկրներին աջակցել կրթության բոլոր փուլերում գենդերային ծրագրերի ընդգրկմանը ուսումնական ծրագրերում, ինչպես նաև՝ գենդերային վերլուծության և ծրագրերի, քաղաքականության գենդերային ներգործության գնահատման մեթոդաբանության ուսուցմանը:



- Հանձնաժողովն արձանագրեց կանանց և աղջիկների նկատմամբ խտրականության ու բռնության դեմ պայքարի ուղղությամբ վճռական միջոցների ձեռնարկման անհրաժեշտությունը:
- 55-րդ նստաշրջանում հանձնաժողովը մեծ քայլ կատարեց մի որոշում, որը բավականին վիճահարույց է և միանշանակ չի ընկալվում մի շարք երկրներում: Խոսքը վերաբերում է սեռական և վերարտադրողական առողջությանը:

ջությանը: Հանձնաժողովը չսահմանափակվեց այս ոլորտի կարևորությունը նշելով, այլ հստակ արձանագրեց սեռական և վերարտադրողական առողջության ոլորտում կրթության իրավական, նորմատիվ և սոցիալական խոչընդոտների վերացման անհրաժեշտությունը: Միաժամանակ հանձնաժողովը չէր պնդում սեռական և վերարտադրողական իրավունքների ողջ ծավալով ճանաչումը:

- Հանձնաժողովը, թեպետ առանց մանրամասնելու հնարավոր գործողությունները և նշելու դրանց որոշակի ուղղությունները, հաստատականորեն ընդգծեց մասնագիտական և ճյուղային խտրազատության և տղամարդկանց ու կանանց աշխատանքի վարձատրության խիստ տարբերությունների վերացման անհրաժեշտությունը:

- Հանձնաժողովը միանշանակ արձանագրեց գենդերային հետազոտությունների իրականացման ընդլայնման անհրաժեշտությունը և հաստատականորեն կոչ արեց կառավարություններին ֆինանսական և ինստիտուցիոնալ աջակցություն ապահովել գենդերային հետազոտություններ իրականացնող կառույցներին:

Հարկ են համարում նշել ՄԱԿ-ում Հայաստանի դեսպան Կարեն Նազարյանի և ՄԱԿ-ում Հայաստանի ներկայացուցչության աշխատակիցների, մասնավորապես՝ Ասոցիացիայի կանանց լիդերության դպրոցի

շրջանավարտ Անի Քոչարյանի ուշադրությունը մեր նկատմամբ, ինչի շնորհիվ ես հնարավորություն ունեցա մասնակցելու բոլոր պաշտոնական միջոցառումներին, ինչպես նաև «ՄԱԿ-կանայք» ներկայացման արարողությանն ու համերգին: Բացի այդ, ներկայացուցչությունում կազմակերպվեց ընթրիք-հանդիպում ՀՅԴ Հայ օգնության միության կանանց հետ, որտեղ ծավալվեց քննարկում համագործակցության և «Օրորոց» ծրագրին հնարավոր աջակցության մասին, նրանց փոխանցվեցին ծրագրի մասին սկավառակներ:

Մասնակցությունը նստաշրջանի աշխատանքներին ինձ հնարավորություն տվեց հետևելու գենդերային թեմատիկայի առաջնահերթություններում և ՄԱԿ-ի մոտեցումներում առկա փոփոխություններին, ինչպես նաև նորովի դիտարկելու մի շարք հիմնախնդիրներ, որոնցով հարկ է եղել զբաղվել, գնահատելու կանանց միջազգային շարժման վիճակը, համադրելու մեր և այլ երկրների գործընկերների ու քաղաքացիական հասարակության կառույցների փորձը:

Անկասկած, մասնակցությունը նստաշրջանի աշխատանքներին հնարավորություն տվեց ձեռք բերելու նոր գիտելիքներ և նոր փորձ, ինչը, բնականաբար, կնպաստի հասարակական-քաղաքական գործունեության մեջ անձնական պրոֆեսիոնալիզմի բարձրացմանը, ինչպես նաև Ասոցիացիայի գործունեության նոր ռազմավարության որոշմանը:

Ձեռնա Հասրաթյան

Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի նախագահ, մանկավարժական գիտությունների թեկնածու



2010 թ. հուլիսին Միավորված ազգերի կազմակերպության սրեղծած «ՄԱԿ-կանայք» կառույցը զբաղվում է գենդերային հավասարության և կանանց իրավունքների ու հնարավորությունների ընդլայնման հարցերով: Այն սրեղծվել է աշխարհում կանանց կարիքների բավարարման գործում առաջընթացն արագացնելու նպատակով:

Բլեհարկելով այդ ստորաբաժանման սրեղծման օգրին՝ ՄԱԿ-ի անդամ պետությունները պարմահան քայլ կատարեցին գենդերային հավասարության և կանանց իրավունքների ու հնարավորությունների ընդլայնման ոլորտում կազմակերպության նպատակների նվաճումն արագացնելու ուղղությամբ:



Միշել Բաչելետա և ՄԱԿ-ի Կանանց կարգավիճակի հանձնաժողովի նախագահ, ՄԱԿ-ում ՀՀ մշտական ներկայացուցիչ Կարեն Նազարյանը 55-րդ նստաշրջանի բացմանը:

«ՄԱԿ-կանայք» կառույցի սրեղծումը դարձավ ՄԱԿ-ի բարեփոխման մի մասը, միավորելով ՄԱԿ-ի համակարգում մինչ այդ բացառապես գենդերային հավասարության և կանանց իրավունքների ու հնարավորությունների ընդլայնման հարցերով զբաղվող չորս առանձին ստորաբաժանումների առկա ռեսուրսներն ու մանդատները:

«ՄԱԿ-կանայք» կառույցի հիմնական գործառույթներն են.

- աջակցումը միջկառավարական մարմիններին, ինչպիսին է Կանանց կարգավիճակի հանձնաժողովը, քաղաքականության, համընդհանուր չափորոշիչների և նորմերի մշակման հարցում,
- օգնությունը անդամ-պետություններին այդ չափորոշիչների իրականացման հարցում, պարասպարհամոթյունը համապարասիան տեխնիկական և ֆինանսական աջակցություն ցուցաբերելու այն երկրներին,

որոնք ինդրում են այդ մասին, ինչպես նաև քաղաքացիական հասարակության հետ արդյունավետ գործընկերային կապերի ամրապնդումը,

- գենդերային հավասարության ոլորտում սեփական պարավորությունների նկատմամբ ՄԱԿ-ի համակարգի պարասիանարու վերաբերմունքի ապահովումը, այդ թվում ընդհանուր համակարգային առաջընթացի կանոնավոր մշտադիտարկման իրականացումը:

«ՄԱԿ-կանայք» կառույցի տնօրեն է նշանակվել ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի տեղակալ տիկին

Միշել Բաչելետը:

Տիկին Բաչելետը 2006-2010 թթ. զբաղեցրել է Չիլիի նախագահի պաշտոնը: Իր կարիերայի ողջ ընթացքում նա հանդես է գալիս հոգուր գենդերային հավասարության և կանանց իրավունքների ու հնարավորությունների ընդլայնման: Նախագահի պաշտոնում նրա խոշոր հաջողություններից մեկը ինչպիսիս միլիարդավոր դոլարներն ուղղորդելու մասին որոշումն էր, ի հեճուկս ֆինանսական ճգնաժամի, այնպիսի հարցերին, ինչպիսիք են կենսաթոշակային բարեփոխումները, կանանց և երեխաների սոցիալական պաշտպանության ծրագրերը, ինչպես նաև հեղափոխություններն ու մշակումները: Այլ նախաձեռնություններից են ցածր եկամուտ ունեցող ընտանիքների համար անվճար մանկապարտեզների թվի եռակի ավելացումը և ողջ երկրում 3500 մանկապարտեզների համակարգի սրեղծումը:

Տիկին Բաչելետը նաև զբաղեցրել է պաշտպանության և առողջապահության նախարարների պաշտոնները Չիլիի կառավարությունում: Պաշտպանության նախարարի պաշտոնում տիկին Բաչելետը աջակցել է ինչպես բանակում, այնպես էլ ոստիկանությունում կանանց վիճակի բարելավմանն ուղղված գենդերային քաղաքականության ներդրմանը: Որպես առողջապահության նախարար նա բարեփոխումներ է իրականացրել այդ ոլորտում՝ ուշադրությունը կենտրոնացնելով առաջնային բժշկական սպասարկման վրա՝ ընտանիքի մակարդակով ավելի որակյալ և արդյունավետ բժշկական սպասարկում ապահովելու նպատակով:

Աղբյուրը՝ <http://www.un.org/ru/aboutun/structure/unwomen/index.shtml>,
<http://www.un.org/ru/aboutun/structure/unwomen/director.shtml>



ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ԵՎ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՏ ԴՐՈՒՅԹՆԵՐ ԱՐՏԱՑՈՒՎԵՑԻՆ ՆՏԱՇՐՋԱՆԻ ՓԱՏԱԹՂԹԵՐՈՒՄ



ՄԱԿ-ի կանանց կարգավիճակի հանձնաժողովի 55-րդ նստաշրջանի թեման էր «Կանանց և աղջիկների համար կրթության, մասնագիտական պատրաստության, գիտության և տեխնիկայի մատչելիությունը, ներառյալ՝ աջակցությունը կանանց համար լրիվ զբաղվածության և արժանավայել աշխատանքի հավասար մատչելիությանը»:

Այս նստաշրջանում բավական վառ դրսևորվեց կառավարական պատվիրակությունների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների կարգավիճակի անհամաչափությունը: Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների համար միջազգային և կառավարական կառույցների կողմից անցկացվող պաշտոնական նիստերի և միջոցառումների մատչելիության կտրուկ սահմանափակումը պատճառաբանելով հիմնական շենքերի վերանորոգմամբ՝ ՄԱԿ-ը, իմ կարծիքով, էլ ավելի հեռացավ համագործակցությու-

յան և երկխոսության հռչակված սկզբունքներից և ավելի պարփակվեց բյուրոկրատական ու ձևական ընթացակարգերի նեղ շրջանակում: Չէ՞ որ կարելի էր, օրինակ, կազմակերպել նիստերի հեռարձակում և ազատ սենյակներում:

Ցավոք, քաղաքացիական հասարակության կողմից կազմակերպված բազմաթիվ միջոցառումներում (նստաշրջանի ընթացքում անցկացվեցին ավելի քան 250 նման՝ «զուգահեռ» անվանվող միջոցառումներ) զուգահեռ ընթացող աշխատանքի սոսկ աննշան մասն արձագանք գտավ պաշտոնական նիստերի ժամանակ և արտացոլվեց նստաշրջանի փաստաթղթերում: Անկասկած, շատ դժվար է անմիջապես ամփոփել տեղեկատվության այդքան մեծ ծավալը և օպերատիվ հաղորդել այն հանձնաժողովին, բայց թերևս իմաստ ուներ մտահոգվել հետադարձ կապի ամրապնդման մասին:

Այդուհանդերձ, հատկապես հասարակական կազմակերպությունների ելույթների և հայտարարությունների շնորհիվ շատ կարևոր գաղափարներ ու դրույթներ արտացոլվեցին նիստերը վարողների ու նախագահների ամփոփումներում, ինչպես նաև նստաշրջանի փաստաթղթերում:

Առաջին հերթին հարկ է նշել նստաշրջանի աշխատանքների ամփոփման ժամանակ հանձնաժողովի կողմից Պեկինի գործողությունների ծրագրի իրականացման գործում քաղաքացիական հասարակության, ինչպես նաև ազգային մեխանիզմների կարևոր դերի և

բարձր կառավարական մակարդակով դրանց լուրջ ուշադրություն հատկացնելու անհրաժեշտության արձանագրումը:

Պակաս կարևոր չէր հանձնաժողովի կողմից կանանց վիճակի բարելավման ճանապարհին դեռևս առկա լուրջ խոչընդոտների, ինչպես նաև գենդերային կարծրատիպերի և խտրական պատկերացումների ու գործելակերպի կապակցությամբ մտահոգության հրապարակային արտահայտումը:

Չնայած պաշտոնական նիստերի մատչելիության հետ կապված որոշ դժվարություններին՝ նստաշրջանի առաջին շաբաթվա ընթացքում ինձ հաջողվեց մասնակցել մի շարք հիմնական, ինչպես նաև որոշ զուգահեռ միջոցառումների, որոնք անցկացնում էին հասարակական կազմակերպությունները կամ կառավարական ու միջկառավարական կառույցները:

Ի տարբերություն նախորդ տարիների՝ այս անգամ ոչ կառավարական կազմակերպությունների զուգահեռ միջոցառումների մեծ մասը (համեմայն դեպս, իմ մասնակցած միջոցառումների) այնքան էլ հաջող չէին կազմակերպվել այն առումով, որ շատ քիչ ժամանակ էր հատկացված հարցերի ու պատասխանների և այլ մասնակիցների հնարավոր ելույթներ համար:

Քանի որ կանանց վիճակի բարելավումը, ինչպես նաև այդ ուղղությամբ պետությունների վարած քաղաքականության հնարավորությունները զգալի չափով պայմանավորված են



տնտեսական իրավիճակով և տնտեսական հիմնախնդիրների լուծման արդյունավետությամբ, հասարակական կազմակերպությունների զուգահեռ միջոցառումներում մեծ ուշադ-

ՄԻԱՎ-ի համաճարակի») շատ խոսվեց այդ ոլորտում հետազոտությունների անցկացման անհրաժեշտության մասին՝ շարժընթացը բացահայտելու, երևույթի նոր դրսևորումների

նությամբ՝ նշելով, որ հետազոտությունների անցկացումը շատ կարևոր է հասարակական կարծիքի և առանձնապես որոշում կայացնող և քաղաքականություն մշակող անձանց վրա ներազդելու համար:

Հասարակական կազմակերպությունների միջոցառումների ժամանակ լուրջ քննարկման առարկա դարձան տնտեսական իրավիճակն ու հիմնախնդիրները, քանի որ դրանք անմիջական ներգործություն են ունենում կանանց դրության վրա, ինչպես նաև նրանց դրության բարելավման և գենդերային հավասարության առաջնդման ուղղությամբ քաղաքականության իրականացման հնարավորությունների վրա: Շատ հետաքրքիր է, որ տարաբնույթ միջոցառումներում այդ թեմային նվիրված տարբեր ելույթներում հնչեց այն միտքը, որ չի կարելի հույսը դնել միայն շուկայի՝ որպես տնտեսական կյանքի միակ կարգավորիչի վրա: Անհրաժեշտ է պետական սեկտոր՝ հատկապես զբաղվածության ոլորտում, անհրաժեշտ է պետական քաղաքականություն՝ ուղղված կանանց նկատմամբ խտրականության վերացմանը: Կառավարությունները չպետք է օտարվեն քաղաքացիների, առաջին հերթին՝ կանանց սոցիալ-տնտեսական իրավունքների երաշխավորի դերից:

Հասարակական կազմակերպությունների անցկացրած շատ միջոցառումների համընդգրկուն թեման էր կրթության հավասար և արդար մատչելիության ապահովման հիմնախնդիրը, այդ առնչությամբ մանրամասն քննարկվեցին կրթության ոլորտի ֆինանսավորման հարցերը:

Մեծ ուշադրություն հատկացվեց նաև վերարտադրողական առողջության և իրավունքների, ինչպես նաև գենդերային կարծրատիպերի և գենդերային վիճակագրության հիմնախնդիրներին:

Ինձ համար շատ օգտակար եղավ մասնակցությունը գիտության մեջ (հատկապես ճշգրիտ, տեխնիկական և ինժե-

րություն հատկացվեց այդ հիմնախնդիրներին և իրավիճակին: Ընդ որում, շատ ելույթներում ընդգծվեց, որ շուկան չի կարող դիտվել որպես տնտեսական կյանքի միակ կարգավորիչ, և անհրաժեշտ է պետական քաղաքականություն, պետական սեկտոր, իսկ կառավարությունները պետք է հանդես գան գործատուի, սոցիալ-տնտեսական իրավունքների երաշխավորի դերում:

ծագումն ուսումնասիրելու և վելի արդյունավետ նախաձեռ-



Մեծ ուշադրություն դարձվեց նաև կանանց նկատմամբ բռնության հիմնախնդիրին: Նման միջոցառումներից մեկի ժամանակ («Գործողությունների ինտեգրում՝ ի պատասխան կանանց նկատմամբ բռնության և

նություններ և գործողություններ մշակելու համար:

Ինձ հաջողվեց հանդես գալ համառոտ մեկնաբա-

ներական գիտություններում) կանանց ներգրավվածությանը և դերին նվիրված զուգահեռ միջոցառմանը՝ «Կանայք, գի-



տությունը և բուհերը. հասել ենք արդյոք առաջընթացի» թեմայով: Այդ նիստի ընթացքում քննարկվեց 1960-2000 թթ. Մեծ Բրիտանիայում, Կանադայում և ԱՄՆ-ում տեխնիկական և ինժեներական գիտություններում կանանց մասնակցության և բարձրագույն ուսումնական հաստատությունների միջոցով այդ ոլորտների գծով կանանց պատրաստության շարժընթացը: Քանի որ նախատեսված էր ընդամենը երկու ելույթ, և բավականին ժամանակ մնաց բանավեճերի ու մեկնաբանությունների համար, հնարավոր

որոշումների ընդունման մակարդակում:

- Գործունեության ոլորտների իգականացումն ինքնին պարտադիր չէ, որ դրական բնույթ ունենա: Այն կարող է վկայել տվյալ ոլորտի սոցիալական վարկանիշի անկման, ցածր վարձատրության և այլ հանգամանքների մասին:
- Հարկ է իրականացնել կառավարությունների լրբինգ հատուկ քաղաքականություն անցկացնելու, այդ թվում նաև հատուկ ժամանակավոր միջոցներ ձեռ-

չային տեխնոլոգիաների, ծրագրավորման և այլ ոլորտներում, սակայն հարկ է դեռ շատ ջանք գործադրել դասախոսների, գործատուների և վարչարարների մեջ արմատավորված կարծրատիպերը հաղթահարելու համար:)

- Անհրաժեշտ է խրախուսել միջառարկայական հետազոտությունները: Միշտ չէ, որ դրանք արժևորվում և կայացած են համարվում: Սա առանձնապես վերաբերում է գենդերային հետազոտությունների ոլորտին:

Մասնակցությունը նստաշրջանին ինձ համար նաև հնարավորություն էր բարձրացնելու սեփական մասնագիտական որակավորման մակարդակը, այլ տեսանկյունից մոտենալու նախկինում ուսումնասիրած մի շարք հիմնախնդիրների, գնահատելու կանանց միջազգային շարժման ներկայիս վիճակը, ծանոթանալու գենդերային հիմնախնդիրների նոր առաջնայնություններին, այդ հիմնախնդիրների լուծմանը ՄԱԿ-ի, այլ միջազգային կառույցների և կառավարությունների մոտեցումներում տեղի ունեցած փոփոխություններին, համեմատելու մեր ունեցած փորձը արտասահմանյան գործընկերների փորձի հետ, ինչպես նաև մտորելու նոր ռազմավարությունների շուրջ:



ությունը ընձեռվեց հանդես գալու մեկնաբանություններով մի քանի հարցերի շուրջ: Մասնավորապես.

- Ինչպես և այլ ոլորտներում, շատ կարևոր է կանանց «կրիտիկական գանգվածը» (30%) վարչարարների, դասախոսների, առաջատար հետազոտողների շրջանում և որոշումների ընդունման մակարդակում:
- Քանակական գործոնն ինքնին բավարար չէ (իր նշանակությամբ հանդերձ): Անհրաժեշտ է, որ կանայք համարժեք ներկայացված լինեն

նարկելու ուղղությամբ, որպեսզի հեշտացվի տեղեկատվական տեխնոլոգիաների և հաղորդակցությունների ոլորտի դիմամիկ զարգացող հեռանկարային ճյուղերի, ինչպես նաև առաջխաղացման, մասնագիտական աճի հնարավորությունների մատչելիությունը կանանց համար: (Ինչպես ցույց է տալիս հայկական բուհերի համապատասխան ֆակուլտետների փորձը, աղջիկները կարող են հավասարապես մրցակցել տղաների հետ նույնիսկ համակարգ-

Վլադիմիր Օսիպով
Ասոցիացիայի Գենդերային հետազոտությունների կենտրոնի փորձագետ, ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ավագ գիտաշխատող, փիլիսոփայության թեկնածու



Կանանց համար հորելյանական տարում նրանք, ինչպես նախկինում, խտրականության են ենթարկվում

Մենք կարող ենք ունենալ կայուն, խաղաղ և արդար հասարակություն միայն այն դեպքում, եթե կանայք լիովին և հավասարապես ներգրավվեն հասարակական և անձնական կյանքի բոլոր ոլորտներում: Կանանց միջազգային օրվա մեկդարյա հորելյանի կապակցությամբ, այս մասին իր ուղերձում հայտարարել է ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղար Բան Կի-Մունը:

«Հարյուր տարի առաջ, երբ աշխարհում առաջին անգամ նշվեց Կանանց միջազգային օրը, գենդերային հավասարությունը և կանանց դերի գնահատումը արմատական գաղափարներ էին համարվում», - նշել է Բան Կի-Մունը:

«ՄԱԿ-կանայք» նոր կառույցի ղեկավար Միշել Բաշելեյրը հիշեցրել է, որ հարյուր տարի առաջ կանայք աշխարհի միայն երկու երկրում կարող էին մասնակցել ընտրություններին: Այսօր նրանք գլխավորում են պետություններ և կառավարություններ:

«Այդուհանդերձ, չնայած վերջին հարյուրամյակի այս առաջընթացին, Կանանց միջազգային օրվա ժամանակ արտահայտած հավասարության հույսը տակավին հեռու է իրականությունից: Ամեն օր յուրականչուր 90 վայրկյանում մեկ կին է մահանում հղիության կամ ծննդաբերության ժամանակ՝ չունենալով անվտանգ մայրության համար անհրաժեշտ գիտելիքներ և ռեսուրսներ», - հայտարարել է Միշել Բաշելեյրը:

ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղար Բան Կի-Մունը նույնպես ընդգծել է, որ, հակառակ գործադրվող ջանքերին, մի շարք երկրներում և հասարակություններում կանայք դեռևս երկրորդ կարգի քաղաքացիներ են համարվում: Նա նշել է, որ շատ աղջիկներ զրկվում են դպրոց գնալու իրավունքից կամ էլ կիսատ են թողնում ուսումը՝ ունենալով քիչ հմտություններ և առավել քիչ հնարավորություններ: Կանայք և աղջիկները շարունակում են ենթարկվել խտրականության և բռնության: «Տանը և դպրոցում, աշխատավայրում ու համայնքում լինել կին նշանակում է լինել խոցելի», - ասվում է ՄԱԿ-ի ղեկավարի ուղերձում:

Բան Կի-Մունը նշել է, որ կանայք մինչև այժմ բավարար չափով ներկայացված չեն իշխանական կառույցներում: «...Երկրների մոտ փաստը փոկոսի ղեկավարները կանայք են: Սակայն անգամ այն երկրներում, որտեղ կանայք քաղաքական գործունեություն են ծավալում, նրանց հետ հաճախ հաշվի չեն նստում այլ բնագավառների որոշումների կայացման հարցում, ներառյալ բիզնեսի և արդյունաբերության ոլորտները», - ասել է ՄԱԿ-ի ղեկավարը:

Նա հիշեցրել է ՄԱԿ-ի վերջին նախաձեռնությունը՝ «Կանանց ստարտեյլու սկզբունքները», որը հետամուտ է շրկելու գենդերային անհամաչափությունը: Այդ նախաձեռնությունն արդեն իսկ որդեգրվել է ավելի քան 130 խոշոր կազմակերպությունների կողմից:

Կանանց միջազգային օրվա այս տարվա տոնակատարության հիմքում ընկած է կանանց համար կրթության, մասնագիտական պատրաստության, գիտության և տեխնոլոգիաների ոլորտներում հավասար իրավունք ապահովելը: Օրինակ՝ բջջային հեռախոսներն ու համացանցը կանանց հնարավորություն են ընձեռում բարելավելու իրենց ընտանիքների առողջությունը և ապահովելու բարեկեցությունը, գումար վաստակելու և այսպիսով օգնում են գերծ մնալու շահագործումից ու խոցելիությունից: «Նման միջոցների հասանելիությունը, ինչպես նաև կրթությունն ու ուսուցումը օգնում են կանանց դուրս գալ աղքատությունից, պայքարելու անարդարության դեմ և պաշտպանելու իրենց իրավունքները», - ընդգծել է ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարը:

Աղբյուրը՝ <http://www.un.org/russian/mobile/fullstorynews.asp?newsID=15216>,
<http://www.un.am/?laid=2&com=module&module=static&id=1172>



**ՔՆՆԱՐԿՈՒՄ ԵՆՔ ՄԱԿ-ի ԿԱՆԱՆՑ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 55-րդ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

**ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԴՈՒ ՅԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻՑ Է
ԵՎ ՊԵՏՔ Է ՄԱՏՉԵԼԻ ԼԻՆԻ ԲՈԼՈՐԻՆ**



գիտաշխատող, փիլիսոփայության թեկնածու Վլադիմիր Օսիպովը, որոնք մասնակցել են Նյու-Յորքում՝ ՄԱԿ-ի գրասենյակում կայացած ՄԱԿ-ի Կանանց կարգավիճակի հանձնաժողովի 55-րդ նստաշրջանի աշխատանքներին, ներկայացրեցին նստաշրջանի աշխատանքները և նրա ընդունած փաստաթղթերը:

Վլադիմիր Օսիպովը, ընդգծելով ՄԱԿ-ի Կանանց կարգավիճակի հանձնաժողովի կարևոր դերը գենդերային հավասարության և կանանց իրավունքների ու հնարավորությունների ընդլայնման հարցերին վերաբերող ընդհանուր քաղաքականության, համաշխարհային չափորոշիչների և նորմերի սահմանման գործում, նշեց. «Հանձնաժողովի ամենամյա նստաշրջանն այն համաժողովն է, որտեղ ՄԱԿ-ի կառույցները, միջազգային կազմակերպությունները, կառավարությունները, մասնավոր սեկտորը և քաղաքացիական հասարակությունը կարող են մտքեր փոխանակել, փորձել հասնել համաձայնության Պեկինի գործողությունների ծրագրի կատարմանը և ռազմավարությունների մշակմանն ու խոչընդոտների հաղթահարմանն ուղղված առաջնահերթ միջոցառումների, ինչպես նաև նոր մարտահրավերների համարժեք պատասխանների որոնման առնչությամբ»:

Ներկայացնելով հանձնաժողովի 55-րդ նստաշրջանի հիմնական թեման՝ **«Կանանց և աղջիկների համար կրթության, մասնագիտական պատ-**

րաստության, գիտության և տեխնիկայի մատչելիությունը՝ ներառյալ աջակցումը կանանց համար լրիվ զբաղվածության և արժանավայել աշխատանքի հավասար մատչելիությունը», փորձագետները նշեցին, որ նստաշրջանում հատուկ ուշադրություն հրավիրվեց իրավական, տնտեսական, սոցիալական և մշակութային այն արգելքների վրա, որոնք խոչընդոտում են կրթության և մասնագիտական պատրաստության հավասար մատչելիությունը: Նստաշրջանում արձանագրվեց նաև, որ դեռևս լուրջ խոչընդոտներ կան հատկապես գիտության և տեխնիկայի ոլորտում կանանց վիճակի բարելավման ճանապարհին:

Կլոր սեղանի մասնակիցներն իրենց ելույթներում ընդգծում էին, որ կրթության, մասնագիտական պատրաստության և գիտության ու տեխնիկայի հավասար մատչելիությունն ընդլայնում է կանանց հնարավորությունները գլոբալ փոփոխությունների համատեքստում և նպաստում մարդու բոլոր իրավունքների իրականացմանը, ինչպես նաև գենդերային հավասարությանը հասնելուն և կանանց նկատմամբ խտրականության ու բռնության բոլոր ձևերը վերացնելուն:

Նրանք նշում էին, որ եթե տարրական և հիմնական կրթության ոլորտում թե՛ ողջ Հայաստանում, և թե՛ Լոռու մարզում տղաների և աղջիկների թիվը գրեթե հավասար է, ապա բարձրագույն կրթության համակարգում տղամարդկանց թիվն

Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի Խաղաղության և ժողովրդավարության կենտրոնի նախաձեռնությամբ Վանաձորում *«Կրթության ոլորտի գենդերային հիմնախնդիրները ՄԱԿ-ի կանանց կարգավիճակի հանձնաժողովի 55-րդ նստաշրջանի համատեքստում»* թեմայով անցկացված կլոր սեղանին մասնակցում էին քաղաքի դպրոցների տնօրեններ, փոխտնօրեններ, ուսուցիչներ, Լոռու մարզպետարանի կրթության և սոցիալական բաժինների մասնագետներ, Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի դասախոսներ, քաղաքի տարբեր հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Կլոր սեղանի փորձագետներ՝ Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի նախագահ, մանկավարժական գիտությունների թեկնածու Ջենմա Հասրաթյանը և ՀՀ ԳԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ավագ



արդեն պակասում է: Ընդ որում, նման հարաբերակցությունը պահպանվում է նաև բնագիտական և ճշգրիտ գիտությունների ֆակուլտետների ուսանողների թվում: Մինչդեռ **գիտության և տեխնիկայի ոլորտում կանայք քիչ են ներկայացված:**

Մասնակիցներից շատերը նտահոգություն էին հայտնում հանրապետությունում ընթացող կրթական համակարգի փոփոխությունների կապակցությամբ: Մասնավորապես, նշում էին առարկայական ծրագրերի, չափորոշիչների և մեթոդական ցուցումների անհամապատասխանությունը միմյանց, լուրջ բացթողումները ավագ դպրոցների ընտրության, դրանցում ուսուցչական կազմի ձևավորման, անհրաժեշտ լաբորատորիաներով հագեցվածության գործում: Առանձնապես շեշտվում էր դպրոցներում տղամարդ ուսուցիչների թվի ավելացմանն ուղղված կոնկրետ միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը:

Արդարադառնալով կրթության մատչելիության խնդրին՝ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները ցավով էին արձանագրում, որ խելացի, ընդունակ շատ երեխաներ չեն շարունակում ուսումը ավագ դպրոցում, քանի որ ընտանիքը ծանր սոցիալական վիճակի պատճառով չի կարող միջոցներ հատկացնել նրան տրանսպորտով երթևեկելու, երկարատև դպրոցական օրվա ընթացքում բուժետից օգտվելու, անհրաժեշտ դասագրքերով և գրեմական պիտույքներով ապահովելու համար:

Մասնակիցները նշում էին կլոր սեղանի ժամանակ բարձրացված հիմնահարցերի վերաբերյալ պատշաճ մակարդակով ուսումնասիրությունների, վեր-

լուծությունների իրականացման և համապատասխան առաջարկություններով հանրային հնչեղության հարցերի բարձաձայնման անհրաժեշտության մասին:

Փորձագետները, վերլուծելով հնչած հարցադրումները, կարևորեցին հասարակական կազմակերպությունների գործունեության ակտիվացման, նրանց համագործակցության խորացման անհրաժեշտությունը՝ կրթական համակարգում առկա հիմնախնդիրները հնարավորինս արագ, արդյունավետ և հանրության համար բացասական հետևանքները բացառող ճանապարհով լուծելու տեսանկյունից:



Նրանք նշեցին, որ ՄԱԿ-ի Կանանց կարգավիճակի հանձնաժողովի 55-րդ նստաշրջանի հանձնաժողովն առաջարկել է միջոցներ ձեռնարկել հետևյալ ուղղություններով.

- ազգային օրենսդրական բազայի, քաղաքականության և ծրագրերի ամրապնդում,
- որակյալ կրթության և մասնագիտական պատրաստության ամրապնդում, որոնք հաշվի են առնում գենդերային առանձնահատկություն-

ները, այդ թվում գիտության և տեխնիկայի ասպարեզում,

- աջակցում կրթությունից լրիվ զբաղվածության և արժանավայել աշխատանքի անցմանը,
- վիճակի բարելավում գիտության և տեխնիկայի ոլորտում զբաղված կանանց աշխատանքի պահպանման և առաջնորդման տեսանկյունից,
- գիտության և տեխնիկայի ոլորտում կանանց պահանջմունքների հաշվառման ապահովում:

Ամփոփելով կլոր սեղանի աշխատանքները՝ փորձագետները ՄԱԿ-ի Կանանց կարգավիճակի հանձնաժողովի

55-րդ նստաշրջանի աշխատանքի արդյունքների հիման վրա ներկայացրեցին Հայաստանի համար առավել կարևոր հետևյալ եզրակացությունները.

- քննարկել ինչպես կրթության իրավունքը մատչելիության և մասնակցության տեսանկյունից, այնպես էլ իրավունքները կրթության ոլորտի ներսում, մասնավորապես՝ ընտրության ազատությունը, անդրադառնալ կրթության



միջոցով իրավունքների հարցերին, այսինքն՝ զբաղվածության ոլորտում հնարավորությունների հավասարությանը,

- մեկ անգամ ևս ընդգծել կանանց վիճակի բարելավման ազգային մեխանիզմի ուժեղացման կարևորությունը,
- աջակցել գենդերային ծրագրերի ընդգրկմանը կրթական ծրագրերում,
- արձանագրել կանանց և աղջիկների նկատմամբ խտրականության և բռնության դեմ

պայքարի ուղղությամբ վճռական միջոցների ձեռնարկման անհրաժեշտությունը,

- արձանագրել սեռական և վերարտադրողական առողջության ոլորտում կրթության իրավական, նորմատիվ և սոցիալական խոչընդոտների վերացման անհրաժեշտությունը,
- նշել գենդերային հավասարության ուժեղ դրական ազդեցությունը ծնելիության մակարդակի վրա,

- հաստատականորեն ընդգծել մասնագիտական և ճյուղային խտրազատության և տղամարդկանց ու կանանց աշխատանքի վարձատրության միջև խզումների վերացման անհրաժեշտությունը,
- արձանագրել գենդերային հետազոտությունների ընդլայնման անհրաժեշտությունը:

Արմենուհի Կյուրեղյան

Լոռու քաղաքացիական նախաձեռնությունների կենտրոնի համադասող

«Կրթության ոլորտի գենդերային հիմնախնդիրները ՄԱԿ-ի Կանանց կարգավիճակի հանձնաժողովի 55-րդ նստաշրջանի համատեքստում» թեմայով կլոր սեղան անցկացվեց նաև Գյումրիում՝ մարզի 18 հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ:

Կլոր սեղանը վարում էր *Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի նախագահ, մանկավարժական գիտությունների թեկնածու Ջենմա Հասրաթյանը, փորձագետն էր Վլադիմիր Օսիպովը*: Կլոր սեղանի ընթացքում վեր հանվեցին ՀԿ սեկտորին առնչվող մի շարք սկզբունքային հարցեր համագործակցության, ցանցային աշխատանքի վերաբերյալ: Առաջարկվեց հանդիպել մարզպետի հետ՝ գենդերային հանձնաժողով ստեղծելու նպատակով:



Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիան երախտագիտություն է հայտնում հեղինակներին հողվածները տրամադրելու համար

«Համալսարանական կրթությամբ կանայք» լրատուի հավելվածը տպագրվում է «Կանանց շարժումը հազարամյակների խաչմերուկում. նոր մարտահրավերներ և ռազմավարություն» ծրագրի շրջանակներում «Քաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան»-ի աջակցությամբ

Համարը պատրաստել են
Համարը խմբագրել է
Ձևավորումը՝

*Ջենմա Հասրաթյանը, Գայանե Մերոյանը, Իրինա Շահինյանը
Անահիտ Հարությունյանը
Արթուր Բոյախյանի*

Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա
Երևան 0002, Սարյան 22
Հեռ. (374 10) 53-68-02,
Ֆաքս (374 10) 53-67-92
Email: awue.armenia@gmail.com

Տպագրված է «ԱՍՈՂԻԿ»
հրատարակչության տպարանում:
Երևան, Սայաթ-Նովա 24 (գրասենյակ)
Հեռ. (374 10) 54-49-82, 62-38-63
Էլ.փոստ info@asoghik.am